ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

—o—

ՅՈՒՐԱՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ

—

Ստացանք Բաղդի Հայ-Աւետարանական Համայնքից՝ պ. Պատուական Թառայեանցի մէջցով—100 բուբլի։ Նախորդ ստացածների հետ միասին ունենք ստացած ընդամենը 594 բուբլի։

—

(Նոմակ խմբագրութեան)

Նոր-Նախիջեան, 16 հոկտ.

Այսօր, հոկտ. 16-ին, փոխադրեցի սենոր զպրոցական ֆոնդի համար 1000 բուբլի, որ ստացել եմ Կ. Մ. Զերնեանից։ Մինչև այսօր փոխադրել եմ 22,425 բ., ուրեմն ընդհանուր փոխադրած գումարն է 23,425 բ.։ Հաշուանակութիւնը շարունակում եմ։

Գր. Զալխուշեան

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕՌԲԵԼԵԱՆԸ

—

Պարիզից հետեւեալ հեռագիրներն են ստացվել Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով.

I

Պարիզ, 12/25 հոկտեմբերի

Էջմիածին, Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգին.

Ստիպված լինելով մնալ Եւրոպայում Ձեր Սրբութիւնն ինձ յանձնած միսսիայով, բուռն ափսոսանք եմ զգում, որ չը կարողացայ զալ Էջմիածին։ Ամբողջ հոգովս միանում եմ իմ հայրենակիցներին ողնող զգացումներին խնդրելով ընդունել իմ սրբոտպին շնորհաւորութիւնները։

Նուպար

II

Պարիզ, 12/25 հոկտեմբեր

Հայ տառերու և տպագրութեան յօբելեանները շնորհաւորելով՝ Սահակյ և Մեսրոպայ խնկելի յիշատակին բաղձանքնես է Ձեր Վեհափառ Տեառնդ սուրբ աջոյն անձկալից համբոյրներ մատուցանել։

Հոգաբարձուք՝ Էքնայեան, Զորեան, Էլմասեան, Սամուէլեան, Ծէվահիրճեան, Մեղուբեան, Պարիզի հայոց հովիւ Վռամշապուհ աւագ ք.։

—

«Астр. Лист.»-ում ևս համազգային մեծ յօբելեանի առիթով տպված է Merr-lo-ի «Սահակ-Մեսրոպ» խորագիրը կրող յօդուածը։

—

Զորեքշաբթի, ամսոյս 23-ին, ժողովարանի դահլիճում նշանակված է Հայոց Ազգ. Բնկերութեան հրապարակային նիստը, ի

յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի։ Գարեգին վարդ. Յովսէփեան կը դասախօսէ «Գրչութեան արուեստի և գրի զարգացումը հայոց մէջ»։ Իսկ շաբաթ, ամսոյս 26-ին, նոյն Ընկերութեան հրապարակային նիստում Կարապետ եպիսկոպոսը կը դասախօսէ «Հայոց գրականութեան զարգացումը իր դասական շրջանում»։

—

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեհաճել է յանուն Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների տնօրէն պրոֆ. Բլագովիդովի ուղարկել հետևեալ պատասխան հեռագիրը տառերի գիւտի և տպագրութեան յօբելեանների առիթով յիշեալ պրոֆէսորի ուղարկած շնորհաւորական հեռագրին. «Շնորհակալ եմ ձեր մասնակցութեան համար յօբելեանական տօնին։ Օրհնում եմ ձեզ և ձեր խնամքին յանձնված՝ կանանց բարձր դասընթացքները, կամենում եմ բարգաւաճումն քրիստոնէական բարոյականութեան և կուլտուրայի ոգով։ Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց»։